Քննարկվել և հավանության է արժանացել
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի
«31» 08 2022թ. № 2 նիստում

Հաստատվել է՝
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կոլեգիալ կառավարման խորհրդի «31» 08 2022թ.
N2-22-1 նիստում, խորհրդի նախագահ՝ Ս.Դավիդյան
/ստորագրություն/

ՀՀ ԿԳՄՍՆ «ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում են <<Չարենցավանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ քոլեջ) ներքին և արտաքին շահակիցների շրջանում կրթական գործընթացի բարելավմանն ուղղված հարցումների (այսուհետ՝ հարցում) կազմակերպման, անցկացման, ստացված արդյունքների ամփոփման կարգը, անցկացվող հարցումների ուղղությունները, նպատակները, պարբերականությունը:

1.2. Որպես որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների մասնակցության ձև՝ հատկապես կարևորվում է հարցումների միջոցով կրթական ծրագրերից ուսանողների բավարարվածության մակարդակի ուսումնասիրությունը, որը պետք է ընդգրկի կրթական ծրագրերի որակին առնչվող բոլոր գործոնները, դասախոսների կարիքների վերհանումն ու աշխատանքային գործընթացից բավարարվածության բացահայտումը, քոլեջի շրջանավարտների վերաբերյալ գործատուների կարծիքների ուսումնասիրությունը և ակնկալիքների բացահայտումը:

1.3. Հարցման նպատակը ուսուցման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների կարծիքը հաշվի առնելն է, քոլեջի մասին տեղեկացվածության, ստացած կրթությունից բավարարվածության և առկա կարիքները բացահայտելը, ուսանողների, շրջանավարտների, դասախոսների, գործատուների հետ հետադարձ կապը պահպանելը:

1.4. Բոլոր տեսակի հարցումներն անանուն են: Հարցումներին մասնակցած անձանց անհատական տվյալների գաղտնիությունը երաշխավորվում է, իսկ հարցման արդյունքներն օգտագործվում են միայն ընդհանրացված, վիճակագրական տվյալների ձևով:

1.5. Որպես քոլեջի ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման և գնահատման միջոց հարցումները անց են կացվում կանոնավոր կերպով յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին:

1.6. Բազմակողմ գնահատման արդյունքներն ամփոփվում են մեկ ընդհանուր փաստաթղթում, որը տալիս է հարցման մասնակիցների՝ քոլեջում իրականացվող կրթական ծրագրերից բավարարվածության և կրթական կարիքների քանակական և որակական պատկերը՝ ամփոփվող ժամանակաշրջանի համար:

2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Սույն կարգով սահմանվում են հարցումների հետևյալ ուղղությունները.

2.1.1. <<Քոլեջում իրականացվող կրթական ծրագրերի բովանդակության, ուսուցման մեթոդաբանության, ուսումնական գործընթացի կազմակերպման և դասախոսների դասավանդման արդյունավետության գնահատում>>. հարցման շահառուներն են քոլեջի ուսանողները:

2.1.2. <<Քոլեջի ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների գնահատում>>. հարցման շահառուներն են քոլեջի ուսանողները:

2.1.3. <<Քոլեջի աշխատակիցների՝ դասախոսների և վարչական աշխատողների աշխատանքի, քոլեջային միջավայրի գնահատում>>. հարցման շահառուներն են քոլեջի ուսանողները:

2.1.4. <<Քոլեջի կրթական ծրագրերի վերաբերյալ հանրությանը տրամադրվող տեղեկատվության արժանահավատության գնահատում>>. հարցման շահառուներն են քոլեջի ուսանողները:

2.1.5. <<Ընդունելության, քոլեջում առկա մասնագիտությունների, ուսուցման պայմանների վերաբերյալ հանրության իրազեկման գործիքների արդյունավետության գնահատում, դիմորդների հետաքրքրվածության պատճառների բացահայտում>>. հարցման շահառուներն են քոլեջի առաջին կուրսի ուսանողները:

2.1.6. Ազատ շարադրման տարբերակով ուսումնական գործընթացի վերաբերյալ կարծիքների, առաջարկությունների, դիտարկումների ներկայացում. հարցման շահառուներն են քոլեջի ուսանողները:

2.1.7. <<Քոլեջի դասախոսական կազմի կարիքների վերհանում>>. հարցման շահառուներն են քոլեջի դասախոսները:

2.1.8. <<Քոլեջի ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից աշխատողների բավարարվածության գնահատում>>. հարցման շահառուներն են քոլեջի դասախոսները:

2.1.9. «ՉՊՔ շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրություն». հարցման շահառուներն են քոլեջի հետ համագործակցող գործատուները:

3. ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3.1. Հարցումների կազմակերպման, անցկացման և արդյունքների վերլուծության ընդհանուր պատասխանատվությունը կրում է քոլեջի կրթության որակի պատասխանատուն:

3.2. Քոլեջի կրթության որակի պատասխանատուն իրականացնում է հարցման հարցաթերթերի մշակումը, հարցաթերթերը և հարցումն սկսելուց առաջ ներկայացնում է տնօրենի համաձայնեցմանը:

3.3 Եթե հարցաթերթիկի վերաբերյալ տրվում են փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկություններ և դիտողություններ, ապա կրթության որակի պատասխանատուն կատարված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա լրամշակում է հարցաթերթերը և ներկայացնում տնօրենի համաձայնեցմանը:

3.4. Հարցման ավարտից հետո կրթության որակի պատասխանատուն իրականացնում է հարցման արդյունքների վերլուծություն:

3.5. Հարցման ողջ գործընթացում քոլեջի բոլոր ստորաբաժանումները, ըստ անհրաժեշտության, պարտավոր են աջակցություն ցուցաբերել քոլեջի որակի ապահովման կենտրոնին և ձեռնպահ մնալ ուսանողների շրջանում ուղղորդող քայլեր կատարելուց:

3.6. Հարցումները անանուն են, անցկացվում են թղթային եղանակով, էլեկտրոնային կամ առցանց՝ google forms ձևաչափով:

4. ՀԱՐՑՄԱՆ ԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

4.1. Հարցման թերթիկները մշակելիս ուշադրություն է դարձվում հարցերի բովանդակությանը և հաջորդականությանը:

Հարցաթերթում պետք է՝

4.1.1. հարցերը ներկայացնել պարզ և մատչելի ձևով,

4.1.2. ներառել պատասխանի հասկանալի տարբերակներ ունեցող հարցեր,

4.1.3.ներառել պատասխանի ազատ շարադրման տարբերակ ունեցող հարցեր՝ քոլեջի կրթության որակի մասին շահակիցների ավելի հստակ կարծիքը ստանալու համար:

4.2. Հարցման թերթիկի սկզբնամասում ներկայացվում է հարցման բնույթը, նպատակը և ում կողմից է իրականացվում այն:

4.3. Ուսանողների հարցման թերթիկներում հարցերը բաժավում են հետևյալ հատվածների ըստ հաջորդականության՝

4.3.1. հարցմանը մասնակցած ուսանողների ընդհանուր նկարագիրը (տվյալներ հարցմանը մասնակցողի վերաբերյալ),
4.3.2. Չարենցավանի պետական քոլեջի և մասնագիտական ընտրությանը նպաստող գործոններ,
4.3.3. տվյալ ուսումնական տարվա ընդունելության, քոլեջում առկա մասնագիտությունների, ուսուցման պայմանների վերաբերյալ հանրության իրազեկման գործիքների արդյունավետության գնահատում, դիմորդների հետաքրքրվածության պատճառների բացահայտում (հարցման այս հատվածն առկա է միայն առաջին կուրսի ուսանողների հարցաթերթում),
4.3.4. բավարարվածությունը քոլեջում իրականացվող կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից, ուսումնական գործընթացի կազմակերպումից և դասախոսների դասավանդման արդյունավետությունից,
4.3.5. բավարարվածությունը քոլեջի ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից,
4.3.6. բավարարվածությունը քոլեջի աշխատակիցների՝ դասախոսների և վարչական աշխատողների աշխատանքից, քոլեջային միջավայրից,
4.3.7. բավարարվածությունը կրթական ծրագրերի վերաբերյալ հանրությանը տրամադրվող տեղեկատվության արժանահավատությունից,
4.3.8. Չարենցավանի պետական քոլեջում ստացած կրթության ընդհանուր գնահատականը,

4.3.9. ազատ շարադրման տարբերակով ուսումնական գործընթացի վերաբերյալ կարծիքների, առաջարկությունների, դիտարկումների ներկայացում:

4.4. Հարցաշարերը ենթակա են լրամշակման, փոփոխման, վերանայման՝ ըստ անհաժեշտության:

4.5. Հարցման արդյունքները վերլուծվում, ամփոփվում են կրթության որակի պատասխանատուի կողմից, կազմվում է համապատասխան վերլուծություն:

4.6. Հարցման արդյունքներում դուրս բերված խնդիրները հաշվի են առնվում կրթության որակի և գործընթացների հետ կապված որոշումների ընդունման ժամանակ:

4.7. Հարցման արդյունքների վերլուծությունները պահպանվում են որակի ներքին ապահովման կենտրոնում թղթային կամ էլեկտրոնային տարբերակով:

4.8. Հարցաշարերում ընդգրկված հարցերը պետք է նպաստեն խնդիրների, թույլ կողմերի վերհանմանը, իսկ հավաքագրված տվյալները պետք է հիմք ծառայեն ուսումնական գործընթացի շարունակական բարելավման համար:

5. ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՑԿԱՑՄԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

5.1. Հարցումների անցկացման պարբերականությունը և շահառները ներկայացված են ստորև՝

Հ/Հ	**Հարցման ուղղությունը**	**Պարբերականությունը**	**Շահառները**
1.	Քոլեջում իրականացվող կրթական ծրագրերի բովանդակության, ուսուցման մեթոդաբանության, ուսումնական գործընթացի կազմակերպման և	Տարեկան մեկ անգամ՝ երկրորդ կիսամյակի ավարտին	Քոլեջի ուսանողներ

	դասախոսների դասավանդման արդյունավետության գնահատում		
2.	Քոլեջի ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների գնահատում	Տարեկան մեկ անգամ՝ երկրորդ կիսամյակի ավարտին	Քոլեջի ուսանողներ
3.	Քոլեջի աշխատակիցների՝ դասախոսների և վարչական աշխատողների աշխատանքի, քոլեջային միջավայրի գնահատում	Տարեկան մեկ անգամ՝ երկրորդ կիսամյակի ավարտին	Քոլեջի ուսանողներ
4.	Քոլեջի կրթական ծրագրերի վերաբերյալ հանրությանը տրամադրվող տեղեկատվության արժանահավատության գնահատում	Տարեկան մեկ անգամ՝ երկրորդ կիսամյակի ավարտին	Քոլեջի ուսանողներ
5.	Ընդունելության, քոլեջում առկա մասնագիտությունների, ուսուցման պայմանների վերաբերյալ հանրության իրազեկման գործիքների արդյունավետության գնահատում, դիմորդների հետաքրքրվածության պատճառների բացահայտում	Տարեկան մեկ անգամ՝ երկրորդ կիսամյակի ավարտին	Քոլեջի առաջին կուրսի ուսանողներ
6.	Ազատ շարադրման տարբերակով ուսումնական գործընթացի վերաբերյալ կարծիքների, առաջարկությունների, դիտարկումների ներկայացում	Տարեկան մեկ անգամ՝ երկրորդ կիսամյակի ավարտին	Քոլեջի ուսանողներ
7.	Քոլեջի դասախոսների շրջանում իրականացվող հարցում	Տարեկան մեկ անգամ՝ երկրորդ կիսամյակի ավարտին	Քոլեջի դասախոսական կազմ

8.	Քոլեջի արտաքին շահակիցների շրջանում իրականացվող հարցում	Տարեկան մեկ անգամ	Քոլեջի հետ համագործակցող գործատուներ